

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 29.12.2020թ. թիվ 2012082104 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 02 >> 02 2021թ. 7-13 1185

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Բաբկեն Խուդավերդյանի ՄԴ/2988-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Նոր Նորք 8 զանգվածի 3 շենքի 29 բնակարանի բնակիչ Բաբկեն Խուդավերդյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012082104 որոշումը՝ հայտնելով իր անհամաձայնությունը իրավախախտման հետ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

ՀՀ կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին» 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է 1.17 գծանշմամբ նշված ընդհանուր օգտագործման տրանսպորտային

միջոցների կանգառի կետերից կամ, այդ գծանշման բացակայության դեպքում, ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կամ տաքսիների կայանման տեղերի ցուցիչներից 15 մ մոտ:

Ճանապարհային ոստիկանության Ճանապարհային երթևեկության կազմակերպման հսկողության բաժնի կողմից 27.01.2021թ.-ի տրված տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Աբովյան-Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրված վայրում տեղադրված է 5.16 <<Ավտոբուսի և (կամ) տրոլեյբուսի կանգառի տեղ>> ճանապարհային նշան, որը տեսանելի է երթևեկության մասնակիցներին,ինչպես նաև 10.12.2020թ. իրավախախտման օրվա դրությամբ չի բացակայել:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012082104 որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 10.12.2020թ. ժամը 10:13-ին կանգառ է կատարել Երևան քաղաքի Տերյան-Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների կանգառի կետի տարածքում՝ ժամը 10:12:53-րդ վայրկյանից մինչև 10:14:13-րդ վայրկյանը, որի տևողությունն է 80 վայրկյան է:


Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ ռոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:**

Տեսանյութը փաստում է, որ կանգառը չի կատարվել միայն ուղևոր նստելու և իջնելու նպատակով, գերազանցվել է մեկ ռոպեն: Դիմումատուի կողմից խախտվել են վերը նշված նորմի պահանջը, հետևաբար վիճարկվող որոշումը իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 29.12.2020թ. թիվ 2012082104 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Բաբկեն Խուդավերդյանին:



Ե. Կարապետյան